Հաշվետվությունը ներկայացված եմ
դրական: 18.04.2024թ.
Ն. Հովհաննիսյան

Ծրագրի 40 թեմաների պատրաստակամությունը հայտարարվեց

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
ծրագրերի իրականացման վարչության
հետազոտական ծրագրերի բաժնի պետ
Անուշ Հովհաննիսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 18-ից 2024թ. ապրիլի 18-ը ժամանակաշրջանում կատարած աշխատանքի

Հաշվետու ժամանակաշրջանում կատարել եմ հետևյալ աշխատանքները:

Նախապատրաստել եմ գրություններ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին ամրացված անշարժ գույքից ռադիոքիմիական ռեֆերենսային լաբորատորիայի կառուցման համար ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին տարածքի տրամադրման հետ կապված խնդիրների վերաբերյալ ՏԿԵ նախարարությանը տեղեկատվության տրամադրման ընթացքի մասին:

Նախապատրաստել եմ գրություններ ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 1250-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով Երևան քաղաքի Հ. Արղության 2-րդ նրբանցք, շենք 10 տարածքից Հ. Արղության 2-րդ նրբանցք, շենք 10/2 շարժական գույք տեղափոխելու նպատակով «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գումար տրամադրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ մշակելու մրցույթ հայտարարելու, ֆինանսական աղբյուրների,

մրցույթի պայմանների վերաբերյալ գրությունների նախապատրաստման և ՀՀ կառավարությանը տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

Նախապատրաստել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի N 158-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N1486-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից գույք հետ վերցնելու, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը, հիմնավորումը, նախագծի վերաբերյալ գերատեսչություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը և համապատասխան գրությունները՝ նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու նպատակով:

Նախապատրաստել եմ «ՀՀ ԳԱԱ «Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից գույք հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գույք ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը, հիմնավորումը, նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը և համապատասխան գրությունները՝ նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու նպատակով:

Կատարել եմ նաև գրավոր և բանավոր հանձնարարականներ, նախապատրաստել եմ գրություններ, մասնակցել եմ քննարկումների:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Ծրագրերի իրականացման վարչության
հետազոտական ծրագրերի բաժնի փորձագետ Ռուզան Ասատրյան
18. 04. 2024թ.